ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Doi: 10.56737/2953-7843-2025.06-70

ՏԱԹԵՒԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ,
Բանասիրական գիտ. թեկնածու, ՄՄ

ՔՆԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՄՄ

ՄՈԿՍԻ ՓՈՒԹԿՈՒ ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ ՎԱՆՔԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԿՈՆԴԱԿԸ[1]

Նվիրվում է Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցին
եւ մոկսեցիների հիշատակին

ՄՈՒՏՔ

Քաղաքակիրթ համարվող ԻԱ. դարում Հայաստանի արեւելյան եւ արեւմտյան հարեւանները իրենց տիրապետության տակ անցած տարածքներում՝ Արեւմտյան Հայաստանում, Նախիջեւանում ու Արցախում, նոր ոգեւորությամբ եւ թափով շարունակում են հայկական նյութական մշակույթի դարավոր պատմություն ունեցող հուշարձանների միտումնավոր եւ համակարգված ոչնչացումը։ Յավալիորեն երբեմն անգամ մարում են այս հուշարձանների վերաբերյալ եղած հիշողությունները, ավանդություններն ու ժողովրդական հավատալիքները։ Սակայն պատմությունն ինքը, թերեւս չհամակերպվելով դեպքերի նման ընթացքին, ժամանակ առ ժամանակ երեւան է հանում այնպիսի փաստեր ու վկայություններ, որոնք ստիպում են որոնել, փնտրել ու մոռացության քողից ազատել դեպքերն ու դեմքերը, որոնք մի ժամանակ այնքան կարեւոր դեր ու նշանակություն են ունեցել մեր հոգեւոր, մտավոր ու ֆիզիկական հայրենիքում։

Ստորեւ ներկայացվող ուսումնասիրության նյութը դիպվածով

---

[1]* *Ստացվել է՝ 22.05.2025, գրախոսվել է՝ 24.05.2025։*

էլ. հասցե՝ tatevm0505@gmail.com knarbanaser@gmail.com: *Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝* 25RG–6A078 *ծածկագրով գիտական թեմայի շրջանակում։*

գտնված նման մի պատմական վկայություն է, որը տարիներ շարունակ պահվել է Հայաստանի պատմության թանգարանում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀՆԱՏԻՊ ԳՐՔԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ ՈՒ Հ՝ 352 ԿՈՆԴԱԿԸ

Հայաստանի պատմության թանգարանի (այսուհետ՝ ՀՊԹ) հնատիպ գրքերի պահոցում գրքերի հետ հաջորդական համարակալմամբ պահվում են հայերեն ձեռագրեր եւ պատառիկներ, որոնք թ.-ից սկսած թանգարանը ձեռք է բերել 1921 տարբեր անձանցից։ Մինչեւ վերջերս ՀՊԹ հայերեն ձեռագրերի մասին միակ տպագիր աղբյուրը Օննիկ Եգանյանի 1984 թ. «Յուցակ հայերեն ձեռագրաց ՀՍՍՀ Պետական պատմական թանգարանի» հրապարակումն էր՝ «Բանբեր Մատենադարանի» հանդեսում[2]։ Հրապարակման մեջ Օ. Եգանյանը ներկայացնում է 4 ձեռագիր (հմր 692 Ավետարանը, հմր 592 Տոնացույցը, հմր 741 Ժողովածուն, հմր 693 Բառգիրքը) եւ հնատիպ գրքի կազմում գտնվող մի հիշատակարան։

Թույլտվություն ստանալով աշխատել թանգարանի հնատիպ գրքերի պահոցում՝ պարզեցինք, որ թանգարանի ձեռագիր մատյաններն ավելի շատ են, քան ներկայացված է հոդվածում, եւ 2023–2024 թթ. պարբերական այցերով ձեռնամուխ եղանք դրանց ուսումնասիրմանը[3]։ Արդյունքում ստացվեց, որ թանգարանում պահվում են ԺԵ.–ԺԹ. դարերի 51 հայերեն ձեռագրական միավոր, որոնցից 25-ը՝ ամբողջական ձեռագիր, 25-ը՝ պատառիկ, եւ 1-ը՝ կոնդակ։ Վերջինս կտորի վրա սոսնձված 137,5 սմ երկարությամբ եւ 24 սմ լայնությամբ թղթի գալարաձեւ փաթեթ է, որը նախ իր ձեւով, ապա եւ բովանդակությամբ գրավեց մեր ուշադրությունը;

Կոնդակը գրանցված է 352 համարի ներքո։ Ըստ թանգարանի Գլխավոր մատյանի տեղեկությունների՝ այն ստացվել է 1921 թ. (ավելի ստույգ՝ գրանցված է 1921 թվականից հետո ստացված նյութերի մեջ), եւ հայտնի չէ այն հանձնող մարդու անունը։

---

[2] Օ. Եգանյան, *Յուցակ հայերեն ձեռագրաց ՀՍՍՀ Պետական պատմական թանգարանի, «Բանբեր Մատենադարանի», 1984, հմր 14, էջ 251–275։ Հմմտ.* B. Coulie, Armenian Manuscripts, Catalogues, Collections, Libraries, Turnhout, Brepols, 2020, *էջ 387–388։*

[3] *Աշխատանքի արդյունքը հոդվածի ձեւով ներկայացված է տպագրության «Աշխատություններ Հայաստանի պետական թանգարանի» պարբերականում։ Ուսումնասիրությունը կատարելու թույլտվության, աշխատանքային բոլոր հարցերում լիակատար աջակցության եւ համագործակցության համար շնորհակալ ենք ՀՊԹ աշխատակիցներին։*

Կոնդակը գրված է բոլորգրով, կարմիրով սահմանագծված գրադաշտում։ Վերին 26 սմ երկարությամբ եւ 23 սմ լայնությամբ հատվածի վրա պարզ ու անվարժ նկարչությամբ պատկերված են ս. Գեւորգը ձիու վրա՝ վիշապին խոցելիս, եւ մի վանք, որի զանգակատան վրա կանգնած է աքաղաղ (նկար 1)։ Նկարն արված է սեւ թանաքով, հավանաբար հետագայում ս. Գեւորգի լուսապսակը, աքաղաղը եւ վիշապի թեւերը ներկված են մանուշակագույն թանաքով։ Կոնդակն սկսվում է թռչնագիր «Ի» տառով, որը 17 տողի չափով դեպի ներքեւ է իջնում (նկար 2)։ Այն գունավորված է կարմիր եւ կապույտ գույներով։ Կոնդակը գրված է սեւ թանաքով, միայն առաջին 2 տողը եւ որոշ նախադասությունների սկզբնատառեր՝ կարմիրով։ Կոնդակը մեզ է հասել ամբողջությամբ, միայն վերին՝ պատկերազարդ մասն է վնասված, տեղ-տեղ մինչեւ 8 սմ չափով պատռված։ Պատռվածքներ կան նաեւ կոնդակի աջ լուսանցին։ Գրադաշտին կան մոմի կաթիլից սեւացած–այրված հետքեր, ցեցի անցքեր, լուսանցին՝ մատնահետքեր։ Զախ լուսանցում կա սեւ թանաքով ութանկյուն կնքադրոշմ՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ՄԱՐՏԻՐՈՍ / ՎԱՐԴԱՊԵՏ» գրությամբ (նկար 3)։

Կոնդակը Փութկու Ս. Գեւորգ վանքից է՝ գրված Աբրահամ վարդապետի ձեռքով։ Այն սկսվում է ողջույնի եւ օրհնության խոսքով՝ ուղղված կոնդակին հանդիպող բոլոր անձանց՝ եկեղեցականներին, երեսփոխաններին, իշխաններին, վաճառականներին, մելիքներին, մահտեսիներին, արհեստավորներին, հողագործներին, արանց ու կանանց, ծերերին ու երիտասարդներին։ Մի ամբողջ պարբերությամբ ներկայացվում են սուրբ Գեւորգ Զորավարի սքանչելագործությունները, ապա ծանուցվում է սուրբի անվամբ կառուցված Փութկու հռչակավոր ուխտի, նրա՝ Մոկաց լեռներում ճանապարհորդների համար օթեւան լինելու մասին։ Քանի որ վանքն անվճար է հոգում բոլոր օթեւանողների ծախսերը եւ չունի ո՛չ արտեր, ո՛չ դաշտեր, ո՛չ եկամուտի որեւէ աղբյուր, ապա սույն կոնդակը հորդորում է հավատացյալներին ողորմությամբ օգնել ու աջակցել։

Կոնդակը չունի թվական եւ որեւէ այլ տեղեկություն։

ՀՊԹ-Ի ՀՄՐ 352 ԿՈՆԴԱԿԸ ԵՒ ՓՈՒԹԿՈՒ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ՎԱՆՔԸ

Փութկու Սուրբ Գեւորգ վանքը ԺԹ. դարում բավականին նշանավոր եւ մեծ ժողովրդականություն վայելող վանք էր Արեւմտյան Հայաստանի Վանի նահանգի Վանի գավառի Մոկս գավառակում[4]։ Մոկսն Աղթամարի կաթողիկոսության թեմերից էր, եւ Աղթամարին էր պատկանում նաեւ Ս. Գեւորգ վանքը[5]։

Այսօր վանքն ամայացած ու քանդված վիճակում է[6] (նկար 4–6)[7]։

Բարեբախտաբար մեզ են հասել Փութկու Սուրբ Գեւորգ կամ Սարի Սուրբ Գեւորգ վանքի մասին ձեռագրական տեղեկություններ, ականատեսների՝ աղբյուրագիտական արժեք ստացած փաստագրված վկայություններ եւ դրանց հիման վրա գրված ակնարկներ ու ուսումնասիրություններ[8]։

Ըստ այդ ուսումնասիրությունների՝ Փութկու վանքի հիմնադրման հստակ ժամանակն անհայտ է, սակայն ոմանք այն կապում են Արծրունյաց իշխանության տարիների հետ[9]։ Ձեռագիր աղբյուրների քննությունը

---

[4] Թ. ՀԱԿՈԲՅԱՆ, Ստ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, *Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 5, Երեւան, Երեւանի համալսարանի հրատարակչություն, 2001, էջ 282–283։ Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երեւան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 2002, էջ 756–757։* Ստ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, *Հայոց պաշտամունքային վայրեր, Երեւան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, էջ 411–412։*

[5] *Տես* Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, *Աղթամարի կաթողիկոսության պատմություն, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2017, էջ 247։* Ե. ՏԵՐԿԱՆՑ, *Ճանապարհորդություն Բարձր Հայք եւ Վասպուրական 1872–1873 թթ., Երեւան, Հայաստանի ԳԱ հրատ., 1991, էջ 226–227։*

[6] *Եղեռն՝ Եղեռնից հետո, հտ. Ա, Երեւան, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2015, էջ 244–245։ Համաձայն այս գրքի տեղեկությունների՝ Փութկու Սուրբ Գեւորգ վանքը՝ եկեղեցիով եւ օժանդակ կառույցներով մինչեւ 1980-ական թթ. կանգուն է եղել եւ ծառայել է իբրեւ կացարան քրդերի համար. «2006 թ. պարզվեց, որ արդեն մեկ տասնամյակից ավելի է, ինչ վանքը վերածվել է գանձախույզների բուռն գործունեության վայրի եւ զգալի չափով ավերվել» (էջ 244)։*

Փութկու Ս. Գեւորգ վանքի նկարներից մեկն էլ տես «Ցուշամատեան» կայքում՝

https://www.houshamadyan.org/fileadmin/_processed_/6/3/csm__ZAS4515_retouche_web_76f0e40d69.jpg (15.05.2025)։

[7] *Նկարները տրամադրելու համար խորին շնորհակալություն ենք հայտնում Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող (ՀՃՈՒ) հիմնադրամին։*

[8] *Նպատակ չունենալով տալ վանքի մասին եղած աղբյուրների եւ ուսումնասիրությունների մատենագիտություն՝ քննության կանենք միայն մեր կոնդակի հետ որոշ չափով կապվածները՝ մյուսներին անդրադառնալով ըստ պատեհի։*

[9] *Տես* Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ, *Մոկաց Ս. Գեւորգ վանքը, «Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան», Երեւան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 2002, էջ 756, Ոս-*

ցույց է տալիս, որ ԺԴ. դարում այն եղել է գիտական ու գրչության կարեւոր կենտրոն[10]։ 1601 թ. Ստեփաննոս եպիսկոպոսի նախաձեռնությամբ վանքը նորոգվել է[11]։ Հաջորդիվ տեղեկություններն արդեն ԺԹ. դարից են՝ հիմնականում տարբեր տեղագրական եւ ուղեգրական բնույթի գործեր, վանքերի ու ժողովրդական հավատալիքների մասին ուսումնասիրություններ եւ այլ առիթներով անդրադարձներ վանքին։

Սրանցից ժամանակագրորեն առաջինը թերեւս ԺԹ. դարասկզբին տպագրված Ղ. Ինճիճյանի «Աշխարհագրութիւն» է[12], որտեղ Վանի հարավ արեւմտյան վանքերի մեջ հիշված է նաեւ «Բութկու Սուրբ Գորգ կամ Սուրբ Գէորգ»-ը իբրեւ խոր ձորում գտնվող մի մենաստան՝ հռչակավոր՝ եղանակի վերաբերյալ գուշակություններ անող իր աքաղաղով[13]։

Վանքի մասին փոքրիկ, սակայն բավականին կարեւոր մի տեղեկության ենք հանդիպում 1865 թ. Գարեգին Սրվանձտյանցի խմբագրած «Արծուիկ Տարօնոյ» պարբերականում (Մուշ, Տարօն). «Աղթամարայ վիճակ. Փութկու կամ Պուտկու Ս. Գէորգի վանք կայ։ Նոյնպէս եւ Վանոյ Առաջնորդի թէմը Տիրամօր վանքը։ Երկուքն ալ հռչակաւոր եւ հրաշալի վանքեր են, երկուցն ալ աշխարհականներ կտիրեն *(ընդգծումը մերն է.— Մ. Տ. եւ Հ. Ք.)։ Փութկու վանից երեսը ամեն տարին 20 կամ 25 000 ղշի կառնուն Աղթամարայ կաթուղիկոսէն ծախու եւ վանքի բոլոր եկամտից կտիրէ այն երես առնող աշխարհական մը. ուխտաւորներէ շատ արդինք եւ խոստմունք կ՚գոյանայ. նաեւ տարին բոլոր ժողովարարներ (ընդգծումը մերն է.— Մ. Տ. եւ Հ. Ք.) ունի աշխարհական կարգէ, որք վիճակներ կշրջին կժողովեն խոստունքներ, մատաղներ եւ այլն»[14]։ Ուրեմն՝ 1860-ական թթ. վանքը գտնվում էր աշխարհիկ անձանց կառավարման ներքո. ամեն տարի որեւէ մեկը Աղթամարից 20 000–25 000 ղուռուշով գնում էր վանքի եկամուտները տնօրինելու*

տանիկեան, «Արեւելք», 1887, թ. 1143՝ ըստ Հ. Ոսկեանի «Վասպուրական-Վանի վանքերը» աշխատության (մաս Գ., Վիեննա, Մխիթարեան տպարան, 1947, էջ 889)։

[10] *Տես* Ա. Մաթեւոսեան, *Մոկաց Սարի Ս. Գեւորգ վանքի գրչության կենտրոնը* XIV–XV *դարերում, «Բանբեր Մատենադարանի», 1962, հմր 6, էջ 197–218։*

[11] *Տես* Մ. Հասրաթեան, *Մոկաց Ս. Գեւորգ վանքը, «Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան», Երեւան, 2002, էջ 756։*

[12] Ղ. Վրդ. Ինճիճեան, *Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ եւ Ամերիկոյ, Մասն առաջին, Ասիա, հտ. Ա., Վենետիկ, 1806։*

[13] *Տես նույն տեղում, էջ 145։*

[14] *Արծուիկ Տարօնոյ, 1865, թիւ 36, փետր. 14, էջ 47–48։*

իրավունքը։ Վանքի եկամուտները գոյանում էին ուխտավորների նվիրատվություններից։ Բացի այդ՝ կային նաեւ աշխարհիկ ժողովարարներ, որոնք ամեն տարի շրջում էին տարբեր վայրերով՝ վանքի անունով նվիրատվություններ հավաքելու։ Ինչպես կտեսնենք ստորեւ, վանքի աշխարհիկ կառավարիչ–պատասխանատուն կոչվում էր փութկապան։ Ընդ որում՝ այս «կոչում»–ով անձնավորություն՝ փութկապանցի մահտեսի Հոհան (Յոհան) արձանագրված է նաեւ 1858 թ. Կ. Պոլսում Աղթամարի կաթողիկոսության խնդրով գումարված Ընդհանուր ժողովում, Հոգեւոր ժողովի պատրաստած պայմանագրի ներքո ստորագրած աղթամարցի 21 միաբանների, քահանաների ու աշխարհականների շարքում[15]։ Այլ կերպ ասած, փութկապանը եղել է Աղթամարի կաթողիկոսի խնդրով Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարան բանակցության մեկնած պատվիրակության կազմում։ Մի հետաքրքիր տեղեկություն էլ կա Վիեննայի Մխիթարյան միաբանության հմր 703 ձեռագրում[16], ըստ որի 1839 թ. Աղթամարի կաթողիկոսի հանձնարարականով ոմն Հովհաննես մահտեսի գալիս է Կ. Պոլիս՝ Հայոց Պատրիարքարան, եւ տեղեկացնում, որ մի քուրդ, վանահորը սպանելով, տիրացել է վանքին։ Արդյո՞ք ձեռագրում նշված է վանահայր, կամ վանահայր ասելով պետք է հասկանալ հոգեւորական վանահորը, թե փութկապանին, դժվար է այժմ ասել՝ առանց ձեռագրի ու լրացուցիչ քննության։

Երեմիա Տեւկանցը իր ուղեգրության մեջ հայտնում է, որ 1850 թ. Վանի առաջնորդ Գաբրիել եպիսկոպոսը Մոկսում դպրոց է բացում եւ «Փութկի սուրբ Գեւորգ վանքի 30 000 ղուրուշէն ամսական կապեց վարժապետին»[17]։ Գաբրիել եպիսկոպոսի մահվանից հետո Աղթամարի միաբանները չհոգացին դպրոցի մասին. «Աղթամարցիք ազգ խաբելով Փութկիի մուխաթան իւրացուցին, որ Երուսաղէմի Սուրբ Յակոբայ վանքի դպրոցի նման մի ուսումնարան բանալով վիճակին ուսումնական քահանայ եւ վարժապետ հասուցանէին, սակայն 18 տարի մուխաթան առնելէն յետոյ տեղա-

---

[15] Տե՛ս Մ. Իզմիրլեան, Հայրապետութիւն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ եւ Աղթամար ու Սիս, Կ. Պոլիս, տպագր. Զարդարեան, 1881, էջ 411։ Բացի ստորագրելուց՝ փութկապանցի մահտեսի Հոհանը պայմանագիրը վավերացրել է իր կնիքով (21 անդամից միայն 5-ն են բացի ստորագրությունից նաեւ կնքել պայմանագիրը)։

[16] Տեղեկությունը բերում ենք ըստ Հ. Ոսկյանի. տե՛ս Հ. Ոսկեան, Նշ. աշխ., էջ 892։

[17] Հմմտ. Եր. Տեւկանց, Ճանապարհորդություն Բարձր Հայք եւ Վասպուրական 1872–1873 թթ., Երեւան, Հայաստանի ԳԱ հրատ., 1991, էջ 227։

պահ Յակոբ եպիսկոպոս 2 տարի առաջ մի դպրոց բացաւ Աղթամարայ մէջ...»[18], որն էլ շատ կարճ կյանք ունեցավ։

ԺԹ. դարավերջին եւս վանքի մասին պատմությունները եւ նրա հետ կապված հավատալիքներն արձանագրել են ճանապարհորդներն ու բանահավաքները։ Վանքը հիշատակվում է որպես իջեւանատուն բոլոր ճանապարհորդների համար, ովքեր Վանից Մոկս գնալու ճանապարհին անցնում էին Եղերով լեռան միակ՝ դժվարամատչելի ճանապարհով։ Այսպես, ըստ Գարեգին Սրվանձտյանցի Փութկո Ս. Գեւորգը «այս կողմերի Ս. Բեռնարդոսն է, միակ ապաստարան ուղեւորաց, բուքերու եւ փոթորիկներու երեսէն. հռչակաւոր իւր աքաղաղով»[19]։ Նրա գրառումներում, ճիշտ ինչպես դարասկզբին Ղ. Ինճիճյանն էր նշել, աքաղաղը գուշակում է եղանակը. «երբ նա խօսի, ուղեւորները կը վստահին ճամբայ ելլելու. երբ օդը վտանգաւոր թուի, քանի մ՚ օր բոլորովին անխօս կը մնայ եւ այլն»[20]։

Մեկ այլ նմանատիպ վկայություն կա «Արձագանք»-ի (Թիֆլիս) 1882 թ. 13-րդ համարում[21]։ Հոդվածագիր Ղ. Նահապետյանը, հիմնվելով Ոզմա գյուղի ծերերի պատմածների վրա, հայտնում է, որ Ս. Գեւորգի մասունքը նախապես պահվել է Բեդար գյուղատեղիի Ս. Գեւորգ եկեղեցում։ Երբ հայերը գաղթել են գյուղից, մասունքը մեկ օրվա հեռավորությամբ Մոկաց արեւելյան կողմում՝ Աղերով (Եղերով) լեռների մեջ Փութկի Ս. Գեւորգ վանքում են ամփոփել[22]։

ԺԹ. դարի վերջին Սարի Սուրբ Գեւորգ վանքի մասին անհավանական պատմությունները (անհամար ոչխարի հոտի, նախրի պահապան գայլերի ու վանահայր «խօրօզ»-ի մասին) ոչ միայն հրապարակումներով, այլեւ բանավոր կերպով են հասել Արեւելյան Հայաստանի տարածք եւ ապա հայտնվել մամուլում[23]։

---

[18] Նույն տեղում։

[19] Գ. Սրվանձտյանց, Համով-հոտով, Երկեր, հտ. 1, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978, էջ 402։ Նույնը՝ Համով-հոտով, Կ. Պոլիս, տպագր. Գ. Պաղտատլեան (Արամեան), 1884, էջ 89։

[20] Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց եւ Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, Երկեր, հտ. 1, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978, էջ 75։ Նույնը՝ Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհէրի դուռ, Կ. Պոլիս, տպագր. Ե. Մ. Տնտեսեան, 1874, էջ 106։

[21] Ղ. Նահապետյան, Բարվարա տուն, «Արձագանք», 1882, հ՝ 13, էջ 200–201։

[22] Նույն տեղում, էջ 200։

[23] 1885 թ. «Նոր Դար» թերթի (Թիֆլիս) 25-րդ համարում «Գիւղացւոց նախապաշարմունքները եւ սնահաւատութիւնները» հոդվածում (էջ 1–2) հիշատակվում է Դահարլու (այժմ՝ Գետք) գյուղ եկած մի թափառականի պատմություն Սարի Սուրբ Գեւորգի հրաշքների մասին։

1892 թ. Թիֆլիսում հրատարակված «Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից» ժողովածուի մեջ Գարեգին Հովսեփյանը ներառում է նաեւ Մոկացի Հովանի (Յեովան) պատմած «Սարի Սըփ Գէվորք» ավանդությունը՝ կապված վանքի հիմնադրման, անվան[24] եւ գուշակ աքաղաղի հետ[25]։

Վանքի, հատկապես նրա տնտեսական դրության մասին նոր տեղեկություն ենք գտնում Խաչիկ Լեւոնյանի[26] հոդվածում[27]։ Նա հաղորդում է, որ վանքը «հիմա բոլորովին կորուսած է իր ճոխութիւնը։ Թէպէտ տնտեսական երաշտութենէն առաջ արդիւնաբերութեան կողմէ առաջինն էր մէկ երկու աշխարհական վանահայրերու ձեռքին ներքեւ, որք տարեկան իբր 30–40 հազար դահեկան վճարելով Աղթամարայ իբրեւ կապալառուներ, անոր ամբողջ տարուան հասոյթները կը դարձնէին երկրին ամեն կողմերը պտտելով, որ շատ անգամ 80–100 000 դահեկանի կ'հասնէր»[28]։ Իսկ արդեն «Բիւզանդիոնի» (Կ. Պոլիս) 1903 թ. համարներում[29] նա ավելի մանրամասն է ներկայացնում վանքը՝ իբրեւ ականատես, որ ճանապարհորդության ընթացքում եղել է Փութկու Ս. Գեւորգ վանքում։

Ըստ նրա վանքում ապաստանող ճանապարհորդները երբեմն այնքան շատ էին, «որ շատ անգամ օրական 50-է աւելի հաց ուտողներ կըլլան հոն... որ օրերով հոն օթեւանելու կը ստիպուին՝ օդերու խառնակութեանց պատճառով»[30]։ Պատմում է նաեւ աքաղաղի, նրան ընտրելու եւ թաղելու

---

[24] *Վանքի անվան մասին եղած բոլոր վկայություններն ու բացատրությունները ի մի է հավաքել Հ. Ոսկյանը «Վասպուրական-Վանի վանքերը» աշխատության մեջ (մաս Գ., Վիեննա, Մխիթարեան տպարան, 1947, էջ 884–892)։ Քանի որ վանքի անվան բացատրությունը կապված չէ մեր հոդվածի բուն խնդրի հետ, այդ հարցի ներկայացումը դուրս կթողնենք հետագա շարադրանքից, եթե անգամ մեր քննության մեջ հիշատակվող ուսումնասիրողներն անդրադարձած լինեն դրան։*

[25] Գ. Յովսէփեանց, *Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից, Թիֆլիս, տպարան Մ. Շարաձէ, 1892, էջ 38–46։*

[26] *Խաչիկ, Խաչատուր Լեւոնյան – Վանի Աղչկանց վարժարանի տնօրեն, հեղինակ, հնագետ. տե՛ս* Խ. Լեւոնեան, *Վան-Վասպուրական աշխարհը, հատորը կազմեց, խմբագրեց եւ ծանօթագրեց Եր. Քասունի, Պէյրութ 2013, էջ 6։*

[27] Խ. Լեւոնեան, *Աղթամարայ կաթողիկոսները սկզբէն ցվերջ, «Բիւզանդիոն», 1900, հմր 1194, էջ 1։*

[28] *Նույն տեղում։*

[29] Խ. Լեւոնեան, *Նարեկայ վանքէն դէպ Առբերդոյ Ս. Աստուածածնի վանք եւ Եղերով լեռ, «Բիւզանդիոն», 8–21 հոկտ., 9–22 հոկտ., 10–23 հոկտ., 1903, թիւ 2148, 2149, 2150։ Նույն վերնագրով արտատպված տե՛ս* Խ. Լեւոնեան, *Վան-Վասպուրական աշխարհը, հատորը կազմեց, խմբագրեց եւ ծանօթագրեց Եր. Քասունը, Պէյրութ 2013, էջ 92–102։*

[30] Խ. Լեւոնեան, *նշ. աշխ., էջ 96–97։*

կարգերի մասին[31]։ Թէ՛ նախորդ, թէ՛ այս հոդվածում նա նշում է, որ վանքը կառավարում է Աղթամարի ընտրած-որոշած «աշխարհական վանահայր»՝ «փութկապան»-ը. «Ներկայիս մէջ այս վանքը կորուսած ըլլալով իր նախկին բարոյական հանգամանքը, իսպառ զուրկ է եկեղեցական միաբանութենէ, կառավարուելով Աղթամարայ կողմէն որոշուած աշխարհական վանահօր մը միջոցաւ, որ «փութկապան» կը կոչուի, ունենալով իր ձեռքին տակ տասնէ աւելի մշակ ու հօտաղներ եւ տնտեսուհիներ»[32]։

Ըստ այս հոդվածի՝ փութկապանը տարբեր վայրերից վանքին խոստացված նվիրատվությունները հավաքելու արտոնությունը վաճառում է կապալառուներին, որոնք, 1000–10 000 ղուռուշ խոստանալով վանքին, մի կոնդակ եւ մի խաչ վերցրած շրջում են տարբեր վայրերով՝ հավաքելով հասույթը։ «...փութկապանն երկրին իւրաքանչիւր սահմաններուն արդիւնքները ծախու կը հանէ, զոր կապալառուներ 1000-էն մինչեւ 10 000 ղշ.ի գումար մը խոստանալով անոր, կը գնեն իւրաքանչիւր մէկ կամ երկու գաւառներուն արդիւնքները, եւ այսպէս այդ կապալառուները՝ իբրեւ տեսակ մը խաչագողեր՝ կոնդակ մը (ընդգծումը մերն է.— Մ. Տ. եւ Հ. Ք.) ու խաչ մը հետերնին առած՝ պտոյտի կելնեն իրենց պատկանեալ սահմանները, ու մինչեւ իսկ արտասահման, ժողվելու այն խոստացուած նուէրներն եւ ուրիշ պատահական հասոյթներն եւ անոնցմէ փութկապանին խոստացուած կապալառուական վարձքն իրեն վճարելէն յետոյ, ինչ որ աւելնայ այն գումարէն, իրենց կը պատկանի»[33]։

Մինչ այժմ բերված աղբյուրներից Խ. Լեւոնյանի այս հոդվածը մեզ համար կարեւոր է կոնդակի մասին հիշատակումով եւ դրա գործառույթի վկայությամբ։ Փաստորեն, այն վանքի աշխարհական վանահայրը շնորհում էր կապալառուներին՝ նվիրատվություններ ժողովելու նպատակով։ Վանքը, ինչպես արձանագրել էր դեռեւս Գ. Սրվանձտյանցը 1865 թ., չու-

---

[31] Երբ այս աքաղաղը ծերանում է, միաբաններից մեկը երազի միջոցով իմանում է հաջորդ աքաղաղի գտնվելու վայրը։ Ապա միաբաններից 2-ը զարդարուն վանդակով գնում եւ բերում են նոր աքաղաղին։ Ասում են՝ իբր հին աքաղաղը, նորին տեսնելով, «սրտին կսկիծէն ծիւրելով կը մեռնի», եւ նրան կես քահանայաթաղով որոշված մի տեղում թաղում են։

[32] Նույն տեղում, էջ 97։

[33] Նույն տեղում, էջ 97. «Այս անխիղճ ու աներես կապալառուներէն ոմանք օգտուելով տգէտ ժողովրդեան միամտութենէն, անոնցմէ աւելի արդիւնք քաշելու նպատակաւ կը ջանան երբեմն նախապաշարել զանոնք ըսելով, թէ՝ Սբ. Գէորգի զօրութեամբ՝ վանուց մէջ գտնուած ուռենիները նուռ յառաջ կը բերեն, թէ՝ վանքին ոչխարներն առանց հովիւի արածուելու կ՝երթան եւ կթուելու ատեն ինքնին բերատեղ կու գան, թէ՝ անոր մաքիները զոյգ զոյգ կը ծնին եւն»։

ներ եկեղեցական միաբանություն եւ կառավարվում էր Աղթամարի որոշած «աշխարհական վանահոր»՝ փութկապանի միջոցով։

Մեր ունեցած կոնդակը եւս վանքի համար միջոցներ հավաքելուն է ուղղված։ Սակայն կոնդակը գրված է Աբրահամ վարդապետի անունից։ Սա նշանակում է, որ կա՛մ կոնդակը գրվել է այն ժամանակ, երբ դեռ ուխտը ուներ հոգեւորականներ, այսինքն՝ փութկապաններից առաջ, կա՛մ գրվել է փութկապանների օրոք, Աղթամարից լիազորված որեւէ վարդապետի ձեռքով։ Թե որքան ժամանակ է վանքը «իսպառ զուրկ» եկեղեցական միաբանությունից, հոդվածը չի հայտնում (մեզ չհաջողվեց գտնել որեւէ տեղեկություն այս մասին այլ աղբյուրներում), ուստի եւ չենք կարող որոշել մեր կոնդակի գրության ժամանակահատվածը։ Հատկապես որ վանքի եւ աքաղաղի համբավը Ղ. Ինճիճյանն արձանագրել է դարասկզբին՝ Խ. Լեւոնյանի հոդվածից 100 տարի առաջ, իսկ դա բավականին ժամանակ է, որպեսզի վանքը սկզբում ունենար, ապա չունենար հոգեւորականություն։

Փութկու Ս. Գեւորգ վանքը հիշատակվում է 1902 թ. Գեւորգ Շերենցի տպագրած «Սրբավայրեր» գրքում[34]։ Գ. Շերենցը Մոկաց գավառի սրբավայրերն սկսում է «Փութկու–փոթրկի ս. Գէորգայ վանք»-ով, գլխավորապես ներկայացնում է վանքի՝ իջեւանատուն լինելը բոլոր ճանապարհորդների համար՝ անկախ ազգությունից։ Ըստ նրա վանքը չունի ո՛չ վարելահողեր, ո՛չ գյուղատնտեսական միջոցներ, գլխավոր եկամուտը շրջուն կապալառուների աշխատանքից հավաքվող արդյունքն է, որոնք նախապես սակարկում են Աղթամարի վարչության հետ որոշ գումարով. «Այդ կապալառուները վերցնելով վանքից մի ինչ մասունք կամ խաչ, շրջագայում են երկրէ երկիր եւ հաւաքում են նպաստները, ողորմութիւն ամեն տեսակ արմտիքից, գառ ու ոչխարից, եւ այլն. պատահում է որ քրդերն էլ շատ անգամ մասնակցում են՝ տալով իրենց աննշան զաքաթն (նուէր)...»[35]։ Արդյո՞ք «մի ինչ մասունք» ասելով՝ Գ. Շերենցը նկատի ունի կոնդակը, տեղյա՞կ է դրա մասին, թե՞ ոչ, մնում է անհայտ։

---

[34] Գ. Շէրենց, *Սրբավայրեր. Տեղագրութիւն Վասպուրականի-Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց վանօրէից եւ ուսումնարանաց, Թիֆլիս, տպարան ընկ. «Վարիչ եւ Կամենմախէր», 1902։*

[35] *Նույն տեղում, էջ 132։*

Կոնդակի մասին հիշատակում կա 1909 թվականի «Ազատամարտ» թերթում (Կ. Պոլիս) տպագրված Վ. Փափազյանի «Աղթամարի խնդիրը եւ քննիչ յանձնաժողովի տեղեկագիրը» հոդվածում։ Քննադատելով Աղթամարի վանքերի ներկա դրությունը եւ պատասխանատուներին՝ հոդվածագիրը օրինակ է բերում նաեւ Փութկի հռչակավոր Ս. Գեւորգ վանքը, որ «ժամանակ մը կը շահագործուէր քիւրտ պէյի մը կողմէն... շատ չնչին վարձատրութեամբ մը, իսկ քանի մը տարիներէ ի վեր՝ յանձնուած է Շահէն անունով շատ ճարպիկ Մոկսեցիի մը։ Շահէնը «ժողովոք» ընող խաշագողերու խումբ մը ունի, որոնք գարունը բացուելուն պէս՝ կը ցրուին Մուսուլէն սկսած մինչեւ Սիպիր... Անոնց ձեռքը տրուած է «կոնդակներ», որոնց մէջ պատմուած են Փութկի Ս. Գէորգին «հրաշալիքները» թէ՝ ինչպէս Փութկին «արջ մը ունի, որ շարունակ իր թոնիրին մոխիրները կը մաքրէ, վանքին բանջարանոցը կը մշակէ, թէ ինչպէս վանքին ուռի ծառին վրայ խաղող կը բուսնի, թէ՛ ինչպէս վանքին աքաղաղը («դիկը») եթէ հրամայէ, այն ատեն միայն ճամփորդները պիտի վանքէն երթան, թէ ինչպէս վանքին արջն է որ ցորենը ջրաղաց կը տանէ...»[36]։

Վ. Փափազյանի հոդվածը վանքի նվիրատվությունների հավաքման ու կոնդակի առումով փոքր-ինչ տարբերվում է մինչ այժմ քննած աղբյուրների միանման տեղեկություններից։

Նախ, նա հայտնում է, որ վանքը (թերեւս վանքի եկամուտները կամ դրանց հավաքումը) որոշ ժամանակ քուրդ բեկի ձեռքին էր, սակայն հետո հանձնվում է Շահեն անունով մի մոկսեցու[37]։ Մի կողմ թողնելով հոդվածագրի վերաբերմունքը «ժողովոք» անողներին՝ նկատենք, որ նրանք իրենց ձեռքին ունեն մեզ հետաքրքրող կոնդակները։ Այդ կոնդակի՝ հոդվածում չակերտներով թերեւս մեջբերված հատվածը մեր կոնդակում չկա, սակայն հարց է առաջանում.

Ա. արդյո՞ք հոդվածագիրն ուղղակի մեջբերել է կոնդակից. եթե նկատի ունենանք հոդվածագրի անթաքույց վերաբերմունքը հարցին, կարե-

---

[36] Վ. ՓԱՓԱԶՅԱՆ, *Աղթամարի խնդիրը եւ քննիչ յանձնաժողովի տեղեկագիրը, «Ազատամարտ», 1909, հմր 132, էջ 1։*

[37] *Այն, որ քրդերը սրանից առաջ էլ են փորձել վանքի տնօրինումն իրենց ձեռքն առնել փաստում է Ա. Շահինյանը։ Օգտվելով Խ. Լեւոնյանի անտիպ արխիվից՝ նա գրում է, որ Փութկու Ս. Գեւորգ վանքը ստանալու պահանջով Մոկաց քուրդ բեկերը 1870 թ. բողոքել են Վանի վալիին, սակայն Վանի Մահմեդ փաշան նրանց պահանջը անիրավացի է համարել (տե՛ս* Ա. ՇԱՀԻՆՅԱՆ, *Փութկու Սուրբ Գեւորգ կամ Սարի Սուրբ Գեւորգ վանքը, «Էջմիածին», 1963, հմր 11, էջ 60)։*

Նկ. 1. Կոնդակի նկարազարդ վերին հատվածը (լուս.՝ Հայաստանի պատմության թանգարանի)

Նկ. 3. Լուսանցային կնիքադրոշմը (լուս.՝ Հայաստանի պատմության թանգարանի)



Նկ. 2. Կոնդակի սկիզբը՝ թոչնագիր զարդագրով (լուս.՝ Հայաստանի պատմության թանգարանի)

Նկար 4. Փուրկու Սբ. Գեւորգ վանքը հյուսիս-արեւելքից (լուս.՝ Արմեն Հախնազարյանի, 1972 թ., Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող (ՀՃՈՒ) հիմնադրամի պատկերադարան)

Նկար 5. Սբ. Գեւորգ վանքի ավերակները հյուսիս-արեւելքից (լուս՝ Սամվել Կարապետյան, 2006 թ., Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող (ՀՃՈՒ) հիմնադրամի պատկերադարան)

Նկար 6. Սբ. Գեւորգ վանքի ավերակները 2019 թ. (լուս՝ Սասուն Դանիելյանի, 2019 թ., Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող (ՀՃՈՒ) հիմնադրամի պատկերադարան)

լի է ենթադրել, որ նա կարող էր բանավոր զրույցներով լսածը վերագրել կոնդակի բովանդակությանը։

Բ. Եթե իրոք կոնդակում նման հատված կա, որը բացակայում է մեր կոնդակում, կարո՞ղ էր լինել կոնդակի մի քանի տեքստ. եթե հոդվածագիրը հայտնում է կոնդակների գոյության մասին, կարելի՞ է ենթադրել, որ դրանք կարող էին մեկը մյուսից արտագրված լինելուց բացի, նաեւ այդպիսին չլինել։

Ամեն դեպքում, կարծում ենք, որ այս հոդվածը կարեւոր է նրանով, որ ցույց է տալիս նախ վանքի եկամուտների տնօրինման փոփոխությունները՝ եկամտաբեր շահագործման գրավումը քուրդ բեկի կողմից, ապա նորից մոկսեցու ձեռքն անցնելը՝ Աղթամարի գերակայության ներքո։ Ապա կարեւոր է կոնդակի բովանդակության ներկայացումը, որը կարող է եւ բառացի չլինել, սակայն ընդհանուր գաղափարով՝ Փութկի Ս. Գեւորգի «հրաշալիքները»-ը պատմելով, ճշմարտություն պարունակում է։

Շարունակությունը՝ հաջորդիվ